ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-20/3Հ

<< 16 >> հոկտեմբերի 2020թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Հայնախագիծ>> ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Ազիզյանի (այսուհետ՝ Կատարող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 84 000 000 (**ութսունչորս միլիոն**) ՀՀ դրամ, որից՝ 2020թ. համար՝ 10 167 600 (**տասը միլիոն մեկ հարյուր վաթսունյոթ հազար վեց հարյուր**) **ՀՀ դրամ,** ընդ որում՝

- **ՀՀ Արագածոտնի մարզի Լուսակն համայնքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն** - 3 480 000 (**երեք միլիոն չորս հարյուր ութսուն հազար**) ՀՀ դրամ, որից՝ 2020թ. համար՝ **426 400 (չորս հարյուր քսանվեց հազար չորս հարյուր)** ՀՀ դրամ,

- **ՀՀ Արագածոտնի մարզի Գառնահովիտ համայնքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն** - 3 660 000 (**երեք միլիոն վեց հարյուր վաթսուն հազար**) ՀՀ դրամ, որից՝ 2020թ. համար՝ 446 600 (**չորս հարյուր քառասունվեց հազար վեց հարյուր**) ՀՀ դրամ,

- **ՀՀ Արարատի մարզի Դեղձուտ համայնքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն** - 3 780 000 (**երեք միլիոն յոթ հարյուր ութսուն հազար**) ՀՀ դրամ, որից՝ 2020թ. համար՝ 459 300 (**չորս հարյուր հիսունինը հազար երեք հարյուր**) ՀՀ դրամ,

- **ՀՀ Արմավիրի մարզի գ. Արգինայի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն** - 3 420 000 (**երեք միլիոն չորս հարյուր քսան հազար**) ՀՀ դրամ, որից՝ 2020թ. համար՝ 420 600 (**չորս հարյուր քսան հազար վեց հարյուր**) ՀՀ դրամ,

- **ՀՀ Գեղարքունիքի մարզի Լեռնահովիտ գյուղի Վ. Բարեղամյանի անվան հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն** - 3 480 000 (**երեք միլիոն չորս հարյուր ութսուն հազար**) ՀՀ դրամ, որից՝ 2020թ. համար՝ 424 700 (**չորս հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր**) ՀՀ դրամ,

- **ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Աղբերքի Շատջրեքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն** - 3 540 000 (**երեք միլիոն հինգ հարյուր քառասուն հազար**) ՀՀ դրամ, որից՝ 2020թ. համար՝ 435 700 (**չորս հարյուր երեսունհինգ հազար յոթ հարյուր**) ՀՀ դրամ,

- **ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Ջիլի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն** - 4 320 000 (**չորս միլիոն երեք հարյուր քսան հազար**) ՀՀ դրամ, որից՝ 2020թ. համար՝ 525 500 (**հինգ հարյուր քսանհինգ հազար հինգ հարյուր**) ՀՀ դրամ,

- ՀՀ Լոռու մարզի Մեդովկա համայնքի հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն - 3 840 000 (երեք միլիոն ութ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, որից՝ 2020թ. համար՝ 469 600 (չորս հարյուր վաթսունինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ,

- ՀՀ Լոռու մարզի գ. Հագվու հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն - 3 780 000 (երեք միլիոն յոթ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, որից՝ 2020թ. համար՝ 465 900 (չորս հարյուր վաթսունհինգ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ,

- ՀՀ Սյունիքի մարզի գ. Հարժիսի Համլետ Մինասյանի անվան միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն - 3 840 000 (երեք միլիոն ութ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, որից՝ 2020թ. համար՝ 470 100 (չորս հարյուր յոթանասուն հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ,

- ՀՀ Սյունիքի մարզի Վաղատին գյուղի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն - 4 140 000 (չորս միլիոն մեկ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, որից՝ 2020թ. համար՝ 504 700 (հինգ հարյուր չորս հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ,

- ՀՀ Սյունիքի մարզի գ. Դարբասի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն - 4 080 000 (չորս միլիոն ութսուն հազար) ՀՀ դրամ, որից՝ 2020թ. համար՝ 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ,

- ՀՀ Վայոց Ձորի մարզի ք. Եղեգիսի դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն - 3 780 000 (երեք միլիոն յոթ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, որից՝ 2020թ. համար՝ 462 400 (չորս հարյուր վաթսուներկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ,

- ՀՀ Վայոց Ձորի մարզի գ. Չիվայի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն - 3 780 000 (երեք միլիոն յոթ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, որից՝ 2020թ. համար՝ 465 600 (չորս հարյուր վաթսունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ,

- ՀՀ Վայոց Ձորի մարզի գ. Գոմքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն - 3 420 000 (երեք միլիոն չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, որից՝ 2020թ. համար՝ 416 700 (չորս հարյուր տասնվեց հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ,

- ՀՀ Շիրակի մարզի գ. Արեգնադեմի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն - 3 600 000 (երեք միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, որից՝ 2020թ. համար՝ 441 500 (չորս հարյուր քառասունմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,

- ՀՀ Շիրակի մարզի գ. Բերդաշենի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն - 3 600 000 (երեք միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, որից՝ 2020թ. համար՝ 442 700 (չորս հարյուր քառասուներկու հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ,

- ՀՀ Շիրակի մարզի գ. Կապսի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն - 3 660 000 (երեք միլիոն վեց հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, որից՝ 2020թ. համար՝ 454 700 (չորս հարյուր հիսունչորս հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ,

- ՀՀ Կոտայքի մարզի գ. Ջրառատի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն - 4 020 000 (չորս միլիոն քսան հազար) ՀՀ դրամ, որից՝ 2020թ. համար՝ 490 300 (չորս հարյուր իննսուն հազար երեք հարյուր) ՀՀ դրամ,

- ՀՀ Կոտայքի մարզի գ. Կաթնաղբյուրի հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն - 3 840 000 (երեք միլիոն ութ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, որից՝ 2020թ. համար՝ 465 900 (չորս հարյուր վաթսունհինգ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ,

- ՀՀ Տավուշի մարզի Կիրանցի Գ. Վարդանյանի անվան հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն - 4 020 000 (չորս միլիոն քսան հազար) ՀՀ դրամ, որից՝ 2020թ. համար՝ 489 600 (չորս հարյուր ութսունինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ,

- **ՀՀ Տավուշի մարզի գ. Դովեղի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն** - 4 920 000 (**չորս միլիոն ինը հարյուր քսան հազար**) ՀՀ դրամ, որից՝ 2020թ. համար՝ 489 100 (**չորս հարյուր ութսունինը հազար մեկ հարյուր**) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 25%-ի չափով Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011035772, 900011035780, 900011023307, 900011023570, 900011035798, 900011035806, 900011023604, 900011035814, 900011035822, 900011023661, 900011035830, 900011023695, 900011035731, 900011035723, 900011035749, 900011035848, 900011035756, 900011035764, 900011035855, 900011035863, 900011023745, 900011023752
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝
_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

<<Հայնախագիծ>> ԲԲԸ
ք. Երևան, Չարենցի 1
<<Արդշինբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 2470100038500000
ՀՎՀՀ 01503291

Տնօրեն՝
_____ Գ. Ազիզյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
<< 16 >> հոկտեմբերի 2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-20/3Հ պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության

ՀՀ դրամ

Ծառայության						
					մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	98111140/12	ՀՀ դրամ	84 000 000	1	ՀՀ մարզեր	Շինմոնտաժային աշխատանքների ավարտի հետ

	Տեխնիկական բնութագիր
1	**Շինարարության նկատմամբ հեղինակային հսկողության ծառայության մատուցման բնութագիրը**
	Շինմոնտաժային աշխատանքների իրագործման բոլոր փուլերում դրանց նկատմամբ հեղինակային հսկողության /այսուհետ՝ Հսկողություն/ ծառայության մատուցում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 1998 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 143 «Շինարարության նկատմամբ հեղինակային հսկողության իրականացում» հրամանով հաստատված:
2	**Հսկողության ենթակա աշխատանքների անվանումը**
	Հեղինակային հսկողության իրականացում համաձայն հաստատված նախագծի:
3	**Տեխնիկական առաջադրանք**
	Հսկողության իրականացում Պատվիրատուի կողմից սահմանվող պարտավորությունների համաձայն:
	Հսկողության միջոցով կատարվող աշխատանքների համապատասխանության ապահովում ճարտարապետաշինարարական փաստաթղթերով սահմանված պահանջներին ու նախագծային լուծումներին, ինչպես նաև ՀՀ-ում գործող շինարարական նորմերին ու կանոններին:
	Հսկողության միջոցով շինմոնտաժային աշխատանքների իրականացման ընթացքում նախագծային լուծումներին առնչվող խնդիրների բացահայտման, անհրաժեշտ լուծումների և Պատվիրատուի հետ պարտադիր համաձայնեցման ապահովում:
	Շինարարության վարման ընդհանուր մատյանում նախագծային լուծումների փոփոխությունների, լրացումների և շեղումների վերաբերյալ գրառումների և Պատվիրատուի հետ պարտադիր համաձայնեցման և/կամ տեղեկացման ապահովում:
	Ծառայության մատուցման ապահովում Պայմանագրով նախատեսված ժամկետներում, իսկ անհրաժեշտության դեպքում նաև Պատվիրատուի հատուկ կանչով:
	Ծածկված և փորձարկման ակտերի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում:
	Հսկողության արդյունքներով ամենամսյա հաշվետվությունների ներկայացում:

* ***Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությունը նախօրոք անհրաժեշտ է համաձայնեցնել Պատվիրատուի հետ:***

** Յուրաքանչյուր օբյեկտի համար, ծառայության ժամկետը հաշվարկվում է տվյալ օբյեկտի համար ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքվող պայմանագիրն (համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից՝ շինարարական աշխատանքների կատարման և տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագրերի (համաձայնագրերի) առկայության դեպքում:

Յուրաքանչյուր օբյեկտի համար, շինմոնտաժային աշխատանքների ամբողջական ծավալի կատարման ժամկետը՝ 420 օրացուցային օր է՝ բացառությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Ջիլի միջնակարգ դպրոցի, ՀՀ Տավուշի մարզի Կիրանցի Գ. Վարդանյանի անվան հիմնական դպրոցի և գ. Դովեղի միջնակարգ դպրոցի կառուցման, որոնց աշխատանքների ամբողջական ծավալի կատարման ժամկետը 450 օրացուցային օր է:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011035772, 900011035780, 900011023307, 900011023570, 900011035798, 900011035806, 900011023604, 900011035814, 900011035822, 900011023661, 900011035830, 900011023695, 900011035731, 900011035723, 900011035749, 900011035848, 900011035756, 900011035764, 900011035855, 900011035863, 900011023745, 900011023752
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար _____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

<<Հայնախագիծ>> ԲԲԸ
ք. Երևան, Չարենցի 1
<<Արդշինբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 2470100038500000
ՀՎՀՀ 01503291

Տնօրեն՝ _____ Գ. Ազիզյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
<< 16 >> հոկտեմբերի 2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-20/3Հ պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	98111140/12	ՀՀ Արագածոտնի մարզի Լուսակն համայնքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	426 400	426 400	426 400
		ՀՀ Արագածոտնի մարզի Գառնահովիտ համայնքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	446 600	446 600	446 600
		ՀՀ Արարատի մարզի Դեղձուտ համայնքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	459 300	459 300	459 300
		ՀՀ Արմավիրի մարզի գ. Արգինայի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	420 600	420 600	420 600

		ՀՀ Գեղարքունիքի մարզի Լեռնահովիտ գյուղի Վ. Բարեղամյանի անվան հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	424 700	424 700	424 700
		ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Աղբերքի Շատջրեքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	435 700	435 700	435 700
		ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Ջիլի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	525 500	525 500	525 500
		ՀՀ Լոռու մարզի Մեդովկա համայնքի հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	469 600	469 600	469 600
		ՀՀ Լոռու մարզի գ. Հագվու հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	465 900	465 900	465 900
		ՀՀ Սյունիքի մարզի գ. Հարժիսի Համլետ Մինասյանի անվան միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	470 100	470 100	470 100
		ՀՀ Սյունիքի մարզի Վաղատին գյուղի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	504 700	504 700	504 700

		ՀՀ Սյունիքի մարզի գ. Դարբասի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	500 000	500 000	500 000
		ՀՀ Վայոց Ձորի մարզի ք. Եղեգիսի դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	462 400	462 400	462 400
		ՀՀ Վայոց Ձորի մարզի գ. Չիվայի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	465 600	465 600	465 600
		ՀՀ Վայոց Ձորի մարզի գ. Գոմքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	416 700	416 700	416 700
		ՀՀ Շիրակի մարզի գ. Արեգնադեմի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	441 500	441 500	441 500
		ՀՀ Շիրակի մարզի գ. Բերդաշենի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	442 700	442 700	442 700
		ՀՀ Շիրակի մարզի գ. Կապսի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	454 700	454 700	454 700

		ՀՀ Կոտայքի մարզի գ. Ջրառատի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	490 300	490 300	490 300
		ՀՀ Կոտայքի մարզի գ. Կաթնաղբյուրի հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	465 900	465 900	465 900
		ՀՀ Տավուշի մարզի Կիրանցի Գ. Վարդանյանի անվան հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	489 600	489 600	489 600
		ՀՀ Տավուշի մարզի գ. Դովեղի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	489 100	489 100	489 100
ԸՆԴԱՄԵՆԸ			-	-	-	-	-	-	-	-	-	-	10 167 600	10 167 600	10 167 600

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011035772, 900011035780, 900011023307, 900011023570,
900011035798, 900011035806, 900011023604, 900011035814,
900011035822, 900011023661, 900011035830, 900011023695,
900011035731, 900011035723, 900011035749, 900011035848,
900011035756, 900011035764, 900011035855, 900011035863,
900011023745, 900011023752
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝
_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<Հայնախագիծ>> ԲԲԸ
ք. Երևան, Չարենցի 1
<<Արդշինբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 2470100038500000
ՀՎՀՀ 01503291

Տնօրեն՝
_____ Գ. Ազիզյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
<< 16 >> հոկտեմբերի 2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-20/3Հ պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
<< 16 >> հոկտեմբերի 2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-20/3Հ պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն